Պրոֆեսիոնալ մոտեցում թրեյդինգին

Շաբաթական Զեկույց

19 նոյեմբերի 2012

Հասկանալ ֆինանսական շուկաները,
տեղեկատվությունը և վերլուծությունները
գիտակցված ներդրումների համար

Զեզ ենք ներկայացնում TeleTRADE Հայաստանի շաբաթական զեկույցների շարքի երկրորդ հրապարակումը՝ առաջարկելով միջազգային շուկայական միտումների և ֆինանսական ու տնտեսական զարգացումների բազմակողմանի վերլուծություն՝ կենտրոնանալով Հայաստանի վրա, բայց նաև անդրադառնալով համաշխարհային շուկայական միտումներին և զարգացումներին ԱՄՆ-ում, Եվրոպայում նԱսիայում:

Ձեր ուշադրությանը ներկայացնում ենք՝

- Ամերիկյան շուկաները ուժեղացան սպառողական ծախսերում դանդաղ աճի, տնային տնտեսությունների սպառողական պարտքի կրճատման և տոկոսադրույքների նվազման շնորհիվ՝ նոր վարկեր առաջարկելով բիզնեսի ընդլայնման համար և հնարավոր դարձնելով զբաղվածության մեծացումը: Ամերիկյան տեխնոլոգիական արժեթղթերը կանգնած են տատանողականության նոր ալիքի առջև:

- Եվրոպական ճգնաժամը խորանում է երկրորդ ռեցեսիայի մեկնարկի պատճառով՝ նշանավորվելով պասիվ աճով: Արտահանումները և ներմուծումները լայնորեն նվազում են. ճնշում է գործադրվում բյուջետային հավելյալ կրճատումների համար: Նոր անկայուն իրավիճակ է ստեղծվում որոշ երկրներում համակարգված գործադուլներից հետո, որոնք խաթարում են առևտուրն ու տրանսպորտի գործունեությունը՝ հանգեցնելով մթերքի և վառելիքի աճի:

- Ասիական շուկաները կենտրոնացել են չինական նոր պահպանողական ղեկավարության վրա: ԱՄՆ նախագահը տարածաշրջանային այց է կատարում՝ հետապնդելով առևտրային և ներդրումային հնարավորություններ: Ճապոնիան կանգնած է շուկայական տատանողականության առջև գալիք ընտրությունների և պետական գյուղատնտեսական սուբսիդիաների կրճատման դեմ ագարակատերերի բողոքների պատճառով:

- Համաշխարհային ապրանքային շուկայում նկատվում է ոսկու գնի անկում և նավթի գնի աճ: Վառելիքի գների աճի հետ կապված նոր անհանգստությունները Հորդանանում վերականգնեցին մտահոգությունները Միջին Արևելքում, քանի որ Հորդանանում աննախադեպ ցույցեր են տեղի ունենում, ինչպես նաև երկիրը կանգնած է 5 միլիարդ դոլար բյուջետային դեֆիցիտը կարգավորելու մարտահրավերի առջև:

- Հայաստանը կարող է շահել Աբխազիայի միջով դեպի Ռուսաստան երկաթուղային գիծը վերականգնելու վրացական կառավարության կողմից արված առաջարկից: Հայաստանի նախագահի այցը Ֆրանսիա ավելի մեծ առևտուր և ֆրանսիական ներդրումներ է խոստանում: Կենդանի անասունների զանգվածային սպանդը Հայաստանում, որը կապված է կենդանիների կերի գների աճի հետ, կարող է ապագայում հանգեցնել մսի և կաթնամթերքների գների աճին:

ԱՄՆ-ի շուկաները. նոր լավատեսություն և նվազող տոկոսադրույքներ

Անցած շաբաթ մեծամասամբ ***Ուոլ Սթրիթը շարունակում էր մտահոգված մնալ*** ԱՄՆ-ի Կոնգրեսի կողմից ահազնացող տնտեսական իրավիճակի հանգուցալուծման հետևանքների պատճառով: Ճանաչված լինելով որպես «բյուջետային անդունդ»՝ բյուջետային այս հանգուցալուծումը մեծապես կախված է 2013 թ. հունվարի 1-ի վերջնաժամկետից, երբ

ավտոմատ քայլեր կգործարկվեն, եթե միայն ԱՄՆ Կոնգրեսը չմիջամտի: Ավտոմատ միջոցառումները ենթադրում են 607 միլիարդ դոլարի ստացում հարկերի բարձրացման միջոցով և 1,5 տրիլիոն դոլարի չափով դաշնային ծախսերի կրճատում: Իր վերընտրությունից հետո ունեցած առաջին մամլո ասուլիսից հետո տպավորություն է ստեղծվում, որ նախագահ ***Օբաման ավելի ուժեղ դիրքերում է, քանի որ ԱՄՆ-ի առաջնային ինստիտուցիոնալ ներդրողները լավատեսորեն են վերաբերում նրան***, որ սպիտակ տունը ի վիճակի կլինի ճնշում գործադրել Կոնգրեսի վրա համաձայնության գալու և ճգնաժամը չեզոքացնելու նպատակով: Այդ լավատեսությունը զուգադիպեց նաև սպառողական ծախսերում դանդաղ աճի հետ, որը Միացյալ Նահանգների տնտեսական աճի, ինչպես նաև գործազրկության ոլորտում տեղի ունեցած շրջադարձի, տնային տնտեսությունների սպառողական պարտքի կրճատման և տների բարելավված շուկայի հիմնական խթանիչ ուժն է:

Այդ ընթացքում ԱՄՆ-ի Դաշնային պահուստային համակարգի նախագահ Բեն Բերնանկեն ևս այս շաբաթ ***վստահություն հաղորդեց շուկային***՝ խոստանալով օգտագործել իր տրամադրության տակ եղած բոլոր գործիքները տնտեսական աճը և տների շուկայի վերականգնումը արագացնելու նպատակով: Կարևոր է նշել, որ Բերնանկեն ակնարկեց, որ Դաշնային պահուստային բանկը, ամենայն հավանականությամբ, հաջորդ տարվա ընթացքում ևս կշարունակի և կընդլայնի պարտատոմսերի գնումները. մի քայլ, ***որը կբերի տոկոսադրույքների նվազմանը***: Մասնավորապես, ամերիկյան տասնամյա պարտատոմսերի առումով տոկոսադրույքի հետագա իջեցման ազդեցությունը ***կխթանի ավելի ընդլայնված նվազում***, քանի որ հիփոթեքային և այլ վարկային տոկոսադրույքները, ինչպիսիք են կորպորատիվ վարկերը, անմիջականորեն կապված են գանձապետական պարտատոմսերի հետ: Իր հերթին ***սա կհեշտացնի բիզնեսի ընդլայնման նպատակով նախատեսված ցածր տոկոսայնությամբ վարկի և գանձապետական պարտամուրհակների առանց այն էլ «ազատ մուտքը»***՝ այդպիսով օժանդակելով զբաղվածության ընդլայնմանը:

Հնարավոր է, որ ամերիկյան արժեթղթերը տատանողականության նոր ալիքի հանդիպեն, քանի որ Microsoft և Apple ընկերությունների բարձրաստիճան դեմքերը հրաժարական տվեցին կամ ազատվեցին աշխատանքից: Այս քայլերը նոր մտահոգություններ ի հայտ բերեցին՝ կապված ***շուկայական առաջամարտիկներ համարվող Microsoft-ի և Apple-ի*** ապագա ռազմավարությունների հետ: Microsoft-ի պարագայում Ստիվեն Սինոֆսկիի հեռացումը, ով ընկերության Windows բլոկի ղեկավարն էր՝ սկսած 2006 թ-ից, տեղի ունեցավ պլանշետային համակարգիչների Windows 8 և Surface-ի շարքի ներկայացումից ընդամենը երկու շաբաթ հետո, ինչը հնարավոր է սպառողների մոտ մտահոգություն առաջացնի Microsoft-ի այն ապրանքների նկատմամբ, որոնք զարգացրել էր Սինոֆսկին: Երկու նոր ապրանքների թողարկումը Microsoft-ի կողմից փորձ է վերանվաճել ծրագրային շուկայի նկատմամբ ազդեցությունը iOS-ի և Android mobile պլանշետային համակարգերի կողմից ավելի խիստ մրցակցության պայմաններում: Apple-ի պարագայում ընկերության iOS ղեկավար Սքոթ Ֆորսթալը և Apple ընկերության մանրածախ վաճառքների բաժնի

ղեկավարը ազատվեցին աշխատանքից՝ ***առաջ բերելով ներդրողների մտահոգությունը՝ կապված ընկերության ներսում ներքին խնդիրների հետ:***
Ֆորսթալը ղեկավարում էր Apple-ի նոր Maps ծրագրի զարգացումը և լայնորեն ընկալվում էր որպես Սթիվ Ջոբսի հետնորդ, ընկերության «երազող» և ռազմավարական համակարգող:

Նոյեմբերի 16-ին ***ամերիկյան խոշոր Hostess Brands ընկերությունը սնանկ ճանաչվեց*** և կասեցրեց մի քանի հանրաճանաչ ամերիկյան ապրանքների արտադրությունը: Թեպետ Hostess Brands-ի փակումը նշանակում է 6 հայտնի ամերիկյան ապրանքների կորուստ, որոնց թվում են «Wonder Bread»-ը և «Twinkies» և «Devil Dogs» խմորեղենների շարքերը, ***ավելի մեծ ազդեցություն կլինի մոտ 20000 աշխատատեղերի վերացումը*** և, ինչը ավելի կարևոր է, ***ընկերության 2 միլիարդ դոլարը, որը պետք է ուղղվեր*** աշխատակիցների երեք հզոր արհմիությունների հանդեպ ***չմարված թոշակային պարտավորություններին***:

Զարգացումները Եվրոպայում

Ճգնաժամը Եվրոզոնայում ահագնացավ միայն այս ժամանակահատվածի ընթացքում: Նոյեմբերի 16-ին լույս տեսած վիճակագրական զեկույցը հաստատեց, որ հուլիսից սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում ***եվրոպական բլոկը պաշտոնապես մտավ ճգնաժամային երկրորդ փուլ*** 2009 թ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամից հետո: Զեկույցում նշվեց նաև եվրոզոնայի արտահանման ծավալներում 1,1 տոկոս անկում և սեպտեմբեր ամսվա ներմուծման ծավալներում 2,7 տոկոս անկում, ինչը անցած ամսվանից սկսած՝ ***առևտրի ավելցուկը կրճատվեցին*** 8,0 միլիարդ եվրոյից մինչև 11,3 միլիարդ եվրո (14,4 միլիարդ դոլար): ***Ընդհանուր առմամբ, ինչպես ներմուծման, այնպես էլ արտահանման ծավալները նվազեցին.*** Մասնավորապես, գերմանական արտահանումները անցած շաբաթվա ընթացքում անկում ապրեցին, իսկ եվրոն հայտնվեց իր օգոստոսյան ամենացածր մակարդակների վրա:

Այնուամենայնիվ, անցած շաբաթ ***խորացող և դանդաղորեն ահագնացող*** ճգնաժամի նշանները շարունակեցին ի հայտ գալ՝ քանի որ համընդհանուր սուվերեն պարտքային ճգնաժամը միայն ավելի մեծ ճնշում սկսեց գործադրել եվրոզոնայի անդամ պետությունների վրա, որպեսզի վերջիններս ավելի շատ բյուջետային կրճատումներ իրականացնեն: Այս իրավիճակը ***եվրոյի գործածման ավելի լայն հատվածներում*** հավելյալ տնտեսական անկումը խթանող պատճառ դարձավ, քանի որ ՀՆԱ-ն երրորդ քառորդի տվյալներով կրճատվեց 0,1 տոկոսով՝ հետևելով վերջին երեք ամիսների ընթացքում 0,2 տոկոս անկմանը: Ամենաերկար անկումը գրանցվեց Հունաստանում, որտեղ տնտեսությունը արդեն 17 քառորդ անընդմեջ անկում է ապրում, և Պորտուգալիայում, որտեղ տնտեսությունը նվազում է արդեն երկրորդ տարին անընդմեջ: Ավելի խորը միտումը ցույց է տալիս, որ ***տնտեսական աճի առումով շրջադարձը հնարավոր չի լինի մինչև 2013 թ-ի սեպտեմբեր ամիսը:***

Խոշոր եվրոպական Ikea կահույք արտադրող շվեդական ընկերության արժեթղթերի արժեքը ևս վտանգված է, և կանխատեսվում է, որ ***հաջորդ շաբաթ ընկերության բաժնետոմսերը կնվազեն***: Լրատվամիջոցների կողմից Ikea-ի հասցեին ուղղված մեղադրանքներից հետո,

որոնց համաձայն վերջինս տարիներ առաջ իր արտադրանքներում օգտագործում էր արևելագերմանական բանտարկյալների աշխատուժը, Ikea-ն պաշտոնապես ներողություն խնդրեց և ներգրավեց անկախ Ernst & Young հաշվեքննություն իրականացնող թիմը հետաքննություն իրականացնելու նպատակով:

Եվրոպական անկայունության ամենամտահոգիչ նշանը եղավ միլիոնավոր աշխատողների ցույցերի և կազմակերպված գործադուլների ժայթքումը, որոնք բողոքում էին բյուջետային կրճատումների և աճող գործազրկության դեմ: Գործադուլները էական էին, քանի որ նրանք ***համակարգվում էին ԵՄ-ի մի շարք երկրներում***: Ամենամեծ ցույցերը եղան Իսպանիայում և Պորտուգալիայում, ավելի փոքր գործադուլներ եղան Իտալիայում և Հունաստանում, սակայն այդ թվում նաև Բելգիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում և մի շարք արևելաեվրոպական երկրներում: Այս գործադուլները ցույց են տալիս ոչ միայն նոր մակարդակի համակարգում սահմանների վրա, սակայն նաև բավարար ուժ ունեն ***առևտուրը և Եվրոպայի ներսում երկրային և օդային տրանսպորտը խաթարելու համար***՝ այդպիսով ***խթանելով մթերքների և վառելիքի գների թեկուզ ժամանակավոր բարձրացում***, ինչը նկատելի կլինի գալիք շաբաթ, երբ ապրանքային մատակարարումները դադարեցվեն:

Եվրոպայում անցած շաբաթ տեղի ունեցած իրադարձություններից կարելի է առանձնացնել նաև ***վարկային բանակցությունները Արժույթի Միջազգային Հիմնադրամի (ԱՄՀ) և Սերբիայի միջև***, որի նպատակն է գալիք տարում աջակցել Սերբիայի տնտեսությանը, ինչպես նաև օժանդակել Բելգրադին լուծել իր պետական պարտքի խնդիրը, որը այժմ կազմում է վերջինիս ՀՆԱ-ի 50 տոկոսը, և բյուջետային դեֆիցիտը, որը կազմում է ՀՆԱ-ի 7 տոկոսը: Այս տարվա ընթացքում՝ ավելի վաղ, ԱՄՀ-ն կասեցրեց Սերբիային տրամադրվելիք 1,3 միլիարդ դոլար վարկը՝ որպես սերբական կառավարությանն ուղղված պատիժ մայիսյան ընտրություններից առաջ չափազանց «գերծախսերի» համար: Ակնկալվում է, որ ***ԱՄՀ-ի վարկի տրամադրումը կավարտվի գալիք ամիս*** և, ամենայն հավանականությամբ, ***կկայունացնի Սերբիայի տատանողական արժութային շուկան և տնտեսության նոր հատվածներ կբացի ավելի մեծ օտարերկրյա ներդրումների համար:*** Վարկը տրամադրվում է Սերբիայի կառավարության կողմից ազատականացման ընդունման և բյուջետային որոշ կրճատումներին ի պատասխան:

Եվս մեկ կարևոր զարգացում, որ տեղի ունեցավ անցած շաբաթ. եվրոզոնայի ֆինանսների նախարարները և միջազգային վարկատուները որոշեցին ***Հունաստանին տրվելիք վերջնաժամկետը երկարաձգել ևս երկու տարով բյուջետային դեֆիցիտը կրճատելու նպատակով***: Այս որոշումը հետևում է նոյեմբերի 12-ին Հունաստանի խորհրդարանի կողմից ընդունված 2013 թ-ի համար նոր բյուջետային կրճատումներ իրականացնելու և խիստ բյուջե ընդունելու մասին որոշմանը: ***Սակայն նախարարները որոշեցին նաև հետաձգել 31,5 միլիարդ եվրոյի (40 միլիարդ դոլար) տրամադրումը մինչև նոյեմբերի 20-ը***: Այժմ ընթանում է

ճգնաժամի վեցերորդ անընդմեջ տարին, և մինչև օրս Հունաստանը փրկության 240 միլիարդ դոլար եվրո կամ 310 միլիարդ դոլար արժողությամբ փաթեթից ստացել է 150 միլիարդ եվրո (193,5 միլիարդ դոլար):

Հայացք Ասիային

Ասիական վերջին ***զարգացումները կենտրոնանում են Չինաստանի վրա, քանի որ առաջնորդների նոր սերունդը եկավ իշխանության*** մի կազմակերպված գործընթացի արդյունքում, որը տեղի է ունենում տասնամյակը մեկ անգամ: Նոյեմբերի 15-ին Սյի Յին Պինը հաստատվեց որպես Չինաստանի Կոմունիստական կուսակցության առաջնորդ՝ փոխարինելով Հու Ջին Տաոյին և նշանակվելով հզոր Կենտրոնական զինվորական կոմիտեի քարտուղար: Սա նախապատրաստություն է 2013 թ. մարտին վերջինիս՝ որպես Չինաստանի նախագահ առաջխաղացմանը: Լայնորեն ընկալվելով որպես ***քաղաքականապես ավելի պահպանողական և տնտեսական բարեփոխումների առումներով զգուշավոր գործիչ***՝ չինական նոր ղեկավարությունը ***պետք է պայքարի տնտեսական նվազող ցուցանիշները բարելավելու, հարստության և եկամուտների մեծացող անհամաչափությունը կարգավորելու և սոցիալական աճող լարվածությունն ու աշխատանքային առանձին դժգոհությունները նվազեցնելու համար:***

Վերընտրվելուց հետո իր առաջին արտագնա այցելությունը ԱՄՆ նախագահ Օբաման կատարեց դեպի Ասիա հարավ-ասիական երեք պետություններ պաշտոնական այցի շրջանակներում: Այցելությունները ***ավելի լայն քաղաքականության մաս են կազմում, որի նպատակն է ԱՄՆ-ի ուշադրությունը սևեռել ասիական և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի վրա:*** Սա նաև Չինաստանի աճող ուժի և ազդեցության նկատմամբ կայունություն մտցնելու, ինչպես նաև Ասիայում ***առևտրի և ներդրումների հնարավորություններ ստեղծելու*** նպատակ է հետապնդում: Իր այցելությունների շարքը սկսելով Թայլանդից՝ ԱՄՆ նախագահը առաջին նախագահը կլինի, ով կայցելի Բիրմա (հայտնի նաև Մյանմար անունով)՝ ուշադրության արժանացնելով այդ երկրի դժվար անցումը ռազմական բռնապետությունից: Նախագահ Օբաման կայցելի նաև Կամբոջիա, որտեղ հանդիպում կկայանա նվիրված արևելաասիական առևտրին: Առևտրի և ներդրումների առումով այս այցելությունները հաստատում են նաև Միացյալ Նահանգների ***նոր ռազմավարությունը, որի նպատակն է ընդլայնել ԱՄՆ-ի ներգրավվածությունը Վիետնամի, Թայլանդի, Մալազիայի և Ֆիլիպինների շուկաներում:***

Ասիայում տիրող ընդարձակ միտումը կենտրոնանում է ***Ճապոնիայի՝ խաղաղօվկիանոսյան գործընկերությանը՝ (TPP)-ին միանալու*** նկրտումների վրա: Վերջինս ***Միացյալ Նահանգների առաջնորդությամբ գործող ազատ առևտրի ընդարձակ համաձայնագիր է***, որի նպատակն է ինտեգրել ասիական և հյուսիս-ամերիկյան տնտեսությունները, ինչպես նաև ձևավորել Ճապոնա-հարավկորեա-չինական ազատ առևտրի պայմանագիր: ***Ճապոնիային, սակայն,***

սպառնում է շուկայական մեծ տատանողականություն գալիք ամիս տեղի ունենալիք կարևոր ընտրություններից առաջ, քանի որ վարչապետ Նոդան պայքարում է իշխանության մնալու համար լուրջ քաղաքական և տնտեսական մարտահրավերների ֆոնի ներքո, որոնք ավելի վատթարացան ճապոնական ազգայնական քաղաքականության պատճառով՝ կապված վիճարկելի կղզիների շուրջ Չինաստանի հետ ձգվող հակամարտության հետ: ***Ճապոնական շուկայի անկայունությունը ևս կշարունակվի,*** քանի որ երկրի հզոր ագարակատերերը դեմ են ազատ առևտրի քաղաքականությանը և կպայքարեն կառավարության՝ պետական գյուղատնտեսական սուբսիդիաները կրճատելու ցանկացած փորձի դեմ:

Ապրանքային շուկա

Վերջին ժամանակահատվածում համաշխարհային ապրանքային շուկան առանձնանում էր ***ոսկու գների անկումով*** և ***նավթի գների աճով***: Ոսկու գների անկումը (մոտ 15 տոկոս մեկ ունցիայի դիմաց), հասնելով 1710 դոլարի մակարդակին, կապված էր երրորդ քառորդում պահանջարկի նվազման հետ: Հում նավթի գների աճը, որից հետո վերջինիս գինը կազմեց 87,05 դոլար բարելի դիմաց, տեղի ունեցավ Միջին Արևելքում վերսկսված բռնության նոր ալիքի, ինչպես նաև այն կանխատեսումների պատճառով, որ Իսրայելը կգրավի Գազայի հատվածը: Եվ քանի որ իսրայելցիների և պաղեստինցիների միջև ընդհարումները ահազնանում են, ***ներդրողների մտահոգությունները միայն ավելի կբարձրացնեն նավթի գները***:

Միջին Արևելք

Չնայած Միջին Արևելքում առկա ընդհանուր հանգիստ վիճակին. «արաբական գարնան» կառավարություններից յուրաքանչյուրը արդեն իսկ սկսել են կառավարել իրենց պետությունները, ***Հորդանանում բողոքների նոր ալիքը վերակենդանացրեց անկայունությունը Միջին Արևելքի շուկաներում***: Թեպետ Հորդանանի և Մարոկկոյի թագավորությունները սկզբում կարծես թե հաջողության հասան դժգոհությունների սկզբնական ալիքի հաղթահարման հարցում «Արաբական գարնան» հեղափոխությունների ընթացքում, Հորդանանում ծայր առած դժգոհությունների նոր ալիքը շարունակում է թափ հավաքել՝ լուռ սպառնալիքի վերածվելով Հորդանանի թագավոր Աբդուլահի կառավարության համար: Հորդանանում տեղ գտած ***դժգոհության նոր ալիքը ուղղված է կառավարության կողմից վառելիքի գների բարձրացման դեմ***: Այդ որոշումը նպատակ էր հետապնդում լուծել երկրի 5 միլիարդ դոլար ծավալով բյուջետային դեֆիցիտի խնդիրը:

Կարևոր է նշել, որ ցույցերը տարածվեցին մի քանի քաղաքներում, քանի որ Հորդանանի համար անսովոր կերպով անցած ամիս տեղի ունեցավ քաղաքական բարեփոխումներ պահանջող ընդդիմության խոշոր հանրահավաք, որտեղ բացեիբաց դժգոհություն հայտնվեց Հորդանանի թագավորի վերաբերյալ: Իր հերթին Աբդուլահ թագավորը փորձեց բավարարել ցուցարարների պահանջները՝ արտահերթ ընտրություններ նշանակելով 2013 թ. հունվար ամսին, սակայն նման զիջումը կարող է բավարար չլինել աճող դժգոհությունը չեզոքացնելու համար: Հորդանանը նաև խոցելի է Միջին Արևելքում ավելի լայնածավալ փոփոխությունների առումով, քանի որ վերջինիս կողմից ***եգիպտական բնական գազի ավանդական ներմուծումը կասեցվել էր Հորդանան և Իսրայել գազ մատակարարող խողովակների վրա հարձակման պատճառով***: Պետք է նշել նաև, որ Իսրայելի և Պաղեստինի միջև հակամարտության ահագնացման պատճառով աճող ազգայնականությունը սպառնում է ավելի ժամանակակից հորդանանյան թագավորին, քանի որ երկրի 6,5 միլիոն բնակչության 60 տոկոսը կազմում են պաղեստինցիները:

Հայաստանյան զարգացումներ

Հայաստանյան տնտեսության վրա ազդեցություն ունեցող երկարաժամկետ ամենաէական միտումներից մեկը վրացական նոր կառավարության կողմից արված վերջին առաջարկությունն է ***Աբխազիայի միջով Ռուսաստանի հետ*** երկաթուղային կապը վերականգնելու մասին: Հայտարարելով իրեն որպես Թբիլիսիում կարևոր «վստահություն կառուցող» միջոց՝ վրացական կառավարությունը առաջարկել է նաև վերականգնել Աբխազիայի միջով անցնող մայրուղին՝ որպես օժանդակություն երկաթուղային գծին: Աբխազական երկաթուղին կարևոր օղակ է Ռուսաստանը Հարավային Կովկասին կապելու առումով և դրա վերաբացումը կբարելավի ու կընդլայնի տարածաշրջանային առևտրային ուղիները՝ մասնավորապես հետևելով Վրաստանի և Թուրքիայի միջև երկաթուղային կապի զարգացմանը: ***Աբխազիայի միջով անցնող երկաթուղային գծի վերականգնումը կօգնի վերջ դնել Հայաստանի մեկուսացմանը***՝ թուլացնելով Թուրքիայի և Ադրբեջանի հետ Հայաստանի փակ սահմանների ազդեցությունը:

Անցյալ շաբաթ Հայաստանը խթան ստացավ, երբ ***Forbes business magazine-ը Հայաստանը գնահատեց որպես բիզնես միջավայրի համար լավագույն տնտեսությունը ունեցող 77-րդ երկիր***, սակայն ինչպես Վրաստանը, այնպես էլ Ադրբեջանը ավելի բարձր գնահատվեցին, քան Հայաստանը՝ համապատասխանաբար գրավելով 50-րդ և 73-րդ տեղերը: Հիմնվելով նույն չափանիշների վրա՝ Ռուսաստանը գրավել էր 105-րդ տեղը: Նախկին խորհրդային պետությունների շարքում լավագույն արդյունքները ցույց տվեցին Բալթյան պետությունները:

Անցած շաբաթ ***Ֆրանսիա կատարած այցելության ընթացքում*** Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը քննարկեց երկկողմանի տնտեսական հարաբերությունները Ֆրանսիայի նախագահ Օլանդի հետ. երկու կողմերն էլ մատնանշեցին ***գյուղատնտեսությունը, ենթակառուցվածքները, փոխադրամիջոցները և հեռահաղորդակցությունը՝ որպես առաջնահերթ հատվածներ ֆրանսիական ավելի խոշոր ներդրումների համար***: Ֆրանսիական պաշտոնյաները փորձում էին հասնել նոր ազատ առևտրի գոտիների հաստատմանը Հայաստանում ֆրանսիական նոր ներդրումներ իրականացելու համար: Քանի որ Ֆրանսիան Հայաստանում երկրորդ խոշորագույն ներդրողն է, հայ-ֆրանսիական տնտեսական և առևտրային հարաբերությունները ընդլայնվել են վերջին տարիներին: ***Կանխատեսվում է նաև նորարարական տեխնոլոգիաների և ՏՏ-ի, ջրի մատակարարման, ձեռներեցության ու մասնավոր հատվածի զարգացման ընդլայնում:*** Ֆրանսիան հետաքրքրված է նաև էներգետիկ հատվածով և ծրագրում է մասնակցել նոր ատոմակայանի շինարարության մրցույթին, որը կփոխարինի Մեծամորին՝ տարածաշրջանի միակ ատոմակայանին:

Անցած շաբաթվա այն տեղեկատվությունը, որ ***Հայաստանում մսերի և որոշ մսային ապրանքների գները անսպասելի նվազեցին*** կարող է երկրում ***գյուղատնտեսական կենդանիներին և ընտանի անասուններին մորթելու արդյունք*** հանդիսանալ այն բանից հետո, երբ կենդանական կերի գները աննադեպ աճ գրանցեցին: Թեպետ տավարի մսի գինը, որը սովորաբար վաճառվում է կիլոգրամի դիմաց մոտ 6 դոլարով, վերջին օրերին Հայաստանի շուկայում նվազեց 75 ցենտով : Ամենայն հավանականությամբ, ագարակատերերը ստիպված են եղել մորթել իրենց անասուններին, քանի որ կենդանիների ավելի թանկ կերը չափազանց դժվարացնում է անհրաժեշտ ձմեռային կերի հասանելիությունը:

Հայկական պաշտոնյաները ուշադրություն չդարձրին գյուղատնտեսության կենդանական հատվածում տիրող ճգնաժամին, և գյուղատնտեսության փոխնախարար Գրիգորի Բաղյանը կարծիք հայտնեց, որ անասուններին մորթելու գործընթացը սովորական երևույթ է տարվա այս ժամանակահատվածի համար, սակայն ***չանդրադարձավ կենդանիների կերի գների բարձրացման*** հարցին այն դեպքում, երբ անասուններին կերակրելու համար անհրաժեշտ խոտի կապոցի գինը աճեց մինչև 1500-1600 դրամ (մոտ 3,7-4,00 դոլար) մեկ հատի դիմաց: Անասունների սպանդը կունենա նաև ***ավելի լայն հետևանքներ***, որոնց թվում կլինեն կաթնամթերքի թանկացումը և մսի հնարավոր պակասությունը, ինչը հետագայում կարող է հանգեցնել մսի գնի թանկացման:

Պրոֆեսիոնալ մոտեցում թրեյդինգին

TeleTRADE-ը FOREX շուկայի հիմնական խաղացողներից է և տիրապետում է աշխարհում ամենալայն ներկայացուցչական ցանցին՝ ունենալով 150 գրասենյակ աշխարհի 20 երկրներում: Հիմնադրված լինելով 1994 թ.՝ TeleTRADE-ը հայտնի առաջամարտիկ է խորհրդատվական և միջազգային ֆինանսական շուկաներում ծառայությունների մատուցման բնագավառում: